«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 66/03-01

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 03.09.2021թ. ժամը 17:00

Համաձայն,12.07.2021թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված Վաչագան Նուշիկյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Գագիկ Գրիգորյանի 09.07.2021թ-ի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով `«Նյու Վա Թրեյդ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Սեպտեմբերի 03-ին,ժամը 17-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված,ս/թ-ի Օգեստոսի 06-ին հետաձգված, «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝քաղաքացի Վաչագան Նուշիկյանի ներկայացուցիչ՝փաստաբան Գագիկ Գրիգորյանը:
«Նյու Վա Թրեյդ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամներ՝Արմենակ Ադամյանը և Ռուբեն Խալաթյանը հեռախոսով զգուշացրել էին իրենց չներկայանալու մասին և խնդրել էին իրենց հնարավորություն տալ մասնակցել նիստին հեռակապի միջոցով:

Դիմումատու՝Դիմումատու՝քաղաքացի Վաչագան Նուշիկյանի ներկայացուցիչ՝փաստաբան Գագիկ Գրիգորյանը,հեռախոսազանգի միջոցով տեղեկացրեց,որ ինքը ուշանում է նիստից և կմասնակցի ուշացումով:

«Նյու Վա Թրեյդ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանը պատշաճ ծանուցված էր բայց երկու օր առաջ ներկայացնելով իր բացատրությունները ,նիստին իր մասնակցությունը չի ապահովել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ 12.07.2021թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված Վաչագան Նուշիկյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Գագիկ Գրիգորյանի 09.07.2021թ-ի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով `«Նյու Վա Թրեյդ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ դիմումատու քաղաքացի Վաչագան Նուշիկյանի ներկայացուցիչ՝փաստաբան Գագիկ Գրիգորյանը,հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է իր ուշանալու վերաբերյալ,քանի որ մասնակցում է դատական նիստի և այդ նիստի վերջանալուն պես ուշացումով կմիանա հանձնաժողովի նիստին,իսկ սնանկության գործով կառավարիչը երկու օր առաջ անձամբ հանձնաժողովին ներկայացրել է բացատրություն,իսկ նիստին իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չի ապահովել:

Հանձնաժողովի անդամներ՝Արմենակ Ադամյանը և Ռուբեն Խալաթյանը հաշվի առնելով համաճարակային վիճակը և իրենց ռիսկային գոտում լինելու հանգամանքը և այն փաստը որ իրենք տնօրինում են գործին վերաբերվող բոլոր փաստաթղթերին և դիմումատուի բացատրություններին,ուստի հեռախոսով զգուշացրել էին իրենց չներկայանալու մասին և խնդրել էին իրենց հնարավորություն տալ մասնակցել նիստին հեռակապի/տեսակապի/ միջոցով և իրենց եզրակացությունը հայտնել քվեարկությամբ:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ առանց սնանկության գործով կառավարիչի և դիմումատու,նիստը շարունակելու վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով որ դիմումատուի ներկայացուցիչին արդեն լսել են նախորդ նիստում և այն որ նա նիստին հնարավոր է միանա ուշացումով,իսկ կառավարիչը իր դիրքորոշքումը ներկայացրել է բացատրության տեսքով,ուստի իր կարծիքով կարելի է նիստը սկսել և փորձել եղած փաստաթղթերի և բացատրությունների միջոցով հանգել եզրակացության:Նա նաև կարծիք հայտնեց,որ հանձնաժողովի անդամները իսկապես գտնվում են ռիսկային գոտում և հնարավոր վարակումներից խուսափելու համար կարող է հենց հիմա կազմակերպել նրանց հետ հեռակապը,ըստ որի նրանք նույնպես կարող են մասնակցել քննարկումներին և քվեարկությանը:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և եզրակացության եկան, որ սկսել նիստը առանց սնանկության գործով կառավարչի և դիմումատուին,հանձնաժողովի մյուս անդամների հետ հեռակապի/տեսակապի/ միջոցով,ուսումնասիրելով ներկայացրած փաստական հանգամանքները և համապատասխան փաստաթղթերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանի հանձնարարության հանձնաժողովի անդամ՝Ա,Մովսիսյանը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով հակիրճ ներկայացնելով դիմումը մասնավորապես նշեց,որ բողոքում նշված փաստերով փորձել են ապացուցել կառավարչի իր իրավունքների չարաշահման փաստերը,որոնք հիմնականում նշվել են 06.05.2021թ-ի ՀՀ Վերաքննիչ դատարանի կայացրած որոշմամբ՝մասնավորապես.

-...Սույն գործով անշուշտ,դատական գործին մասնակցություն կարող է համարվել կառավարչի իրավունքը,սակայն չարաշահված իրավունքները ենթակա չեն պաշտպանության:Այսինքն սնանկության գործով կառավարիչը գործի քննությանը մասնակից դարձվելու հնարավորություն օբեկտիվորեն ունեցել է,սակայն չի օգտվել իր իրավունքից և ներկայումս չարաշահելով իր իրավունքը,գործին մասնակից չդարձվելու հիմքով ներկայացրել է վերաքննիչ բողոք....:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներից հայտնել կարծիքներ:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանը հայտնեց,որ նախորդ նիստում դիմումատուն հայտնել էր,որ վերոնշալը հիմք է տալիս պնդելու որ կառավարչի կողմից խախտվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 27.2 և 27.3 հոդվածները և նույն օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը,որը հիմք է հանդիսանում կառավարչի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և նրան ենթարկել կարգապահական տույժի:

Դիմումատուն հայտնել էր նաև,որ իր կողմից անձամբ կառավարիչ Խ.Նազարյանին պատշաճ կատարվել է բոլոր ծանուցումները այդ և մնացած գործերով,որը կարող է վկայել նաև սնանկության գործով կառավաիչը և եթե կարիքը լինի ինքը կարող է դրանք ներկայացնել հանձնաժողովին:

Հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյանը հիշեցրեց,որ դիմումատուի կողմից անցած նիստին հանձնաժողովին է ներկայացվել նշված Որոշման դեմ վճռաբեկ բողոքի լուսապատճենը և այն,որ դիմումատուի կողմը ներկայացվել է Վճռաբեկ բողոք բայց միայն բանկի վերաքննիչ բողոքի մասով,իսկ կառավարչի մասով չեն բողոքել և իրենց տեղեկություններով **կառավարչի կողմից նույնպես բողոք չի ներկայացվել և այդ մասով Որոշումը մտել է ուժի մեջ:**

Հանձնաժողովի անդամը,ներկայացրեց նաև սնանկության գործով կառավարչի բացատ-րությունը և հայտնեց,որ նրա ուսումնասիրությունից պարզվում է,որ կառավարիչը տեղյակ է եղել հայցադիմումի և դրա դատական կարգով ԵԴ/12618/02/19 քաղաքացիական գործի քննության մասին և մինչև անգամ 18.03.2020թ-ին գրավոր միջնորդություն է ներկայացրել դատարանին «գործի վարույթը կարճելու » վերաբերյալ,որպիսի հիմքով էլ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը իր 18.05.2020թ-ի որոշմամբ քաղ.գործի վարույթը ըստ ընդատության,փոխանցել է ՀՀ Սնանկության դատարանին, որտեղ 08.06.202թ-ին քաղ.գործը վարույթ ընդունելով, արդեն կառավարչին ոչ մի ծանուցում,որոշում կամ վճիռ չի ուղարկվել:Կառավարիչը իր բացատրություններում անդրադարձել է նաև սնանկության վարույթում կառավարչի դերի և կարգավիճակին,անդարդարձել է նաև իր վճռաբեկության կարգով որոշման չբողոքարկելու փաստին,առ յան որ որոշումը արդեն բեկանվել էր և իր դատավարական նպատակները իրագործվել էին և այն բողոքարկելու կարիք չի տեսել:Կառավարիչը բողոքաբերի գործողությունները բացատրել նրանով,որ իր կողմից սնանկության գործի շրջանակներում,հիմնավորված միջնորդության հիմքով,դատարանը արգելանքներ է կիրառվել երաշխավորի գույքի նկատմամբ և մերժել է դրանց վերացման վերաբերյալ Երաշխավորի միջնորդությունները,ուստի երաշխավորը այս բողոքի միջոցով փորձում է իր ուժերի ներածի չափով «պատժել» կառավարչին,ինչը կառավարչի կարծիքով արդեն «իրոք» իրավունքի չարաշահում է:Կառավարիչը որպես եզրահանգում նշել է.

-Եթե նմանատիպ անհեթեթ պատճառաբանությամբ հարուցվի կարգապահական վարույթ և առավել ևս եթե կիրառվի կարգապահական տույժ,ստացվում է,որ կարգապահական հանձնաժողովը իր ձեռքերով է քանդում կառավարչի առանց այն էլ շատ ռիսկային ու բազմակողմանի ճնշումների ենթարկվող ինստիտուտը:

խնդրելով հանձնաժողովից կարճել կարգապահական վարույթը:

Հանձնաժողովի անդամն վերոնշյալի հիմքով հայտնեց այն կարծիքը,որ փաստական հանգամանքների վերլուծության և համադրման արդյունքում կարելի եզրակացնել որ դիմումատուի նշած «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /գ/ կետի խախտում առկա չէ,այսինքն կառավարիչը կատարել է օրենքի կետը և **«ներգրավվել »** է ընդհանուր իրավասության դատարանում առկա դատական գործում ու կատարել է իր պարտականությունները պատշաճորեն և ժամանակին,որի հետևանքով հայցի լսումը փոխանցվել է ըստ ընդհատության,պահպանվելով օրենքի կատարումը:

Հանձնաժողովի անդամ՝Տ.Հարությունյանը նշեց,որ նախորդ նիստում լսելով դիմումատուի ներկայացուցչի բացատրությունները, ուսումնասիրելով կառավարչի ներկայացված բացատրությունը և գործին վերաբերվող փաստաթղթերը հասկանալի է դառնում,որ կառավարչի գործողությունների շարժառիթը հանդիսացել է այն փաստը,որ նրան մասնակից չեն դարձրել գործի քննությանը արդեն քննության որոշակի փուլում,այլ ոչ թե այն փաստը,որ նա մասնակից չի եղել գործի քննությանը ի սկզբանե.որը կառավարիչը հասկանալի չի կարողացել ներկայացնել վերաքննիչ բողոքում,որի հետևանքով էլ իր կարծիքով Վերաքննիչ

քաղաքացիական դատարանը իր որոշմամբ արձանագրել է նրա կողմից իրավունքի չարաշահման մտադրությունը:Հանձնաժողովի նախագահն նշեց նաև որ կարևոր հանգամանք կարող էր ծառայել այս գործում եթե կառավարիչը փորձեր, իր բացատրությունները ներկայացնել վճռաբեկ բողոքի տեսքով,բայց կառավարչի կողմից այդ հնարավորությունը չի օգտագործվել և որոշումը մտնելով ուժի մեջ դարձել է «Իրավունքի չարաշահման» ապացուցված փաստ,որը դատարանի կողմից **չի պաշտպանվել**: Հանձնաժողովի նախագահն հայտնեց նաև այն կարծիքը,որ ըստ էության կառավարչի կողմից չարաշահման մտադրություն չի եղել ու դա ապացուցում է այն փաստը, որ դրա հետևանքով որևէ արտառոց իրադրություն չի փոխվել և որևէ կողմի շահերի առնչությամբ փոփոխություններ տեղի չէն ունեցել այդ թվում նաև դիմումատուի,միայն դատական կարգով չի պաշտպանվել սնանկության գործով կառավարչի, իր կարծիքով՝ «շահերը»,որի վերաբերյալ կառավարիչը բողոք չի տարել, սնանկության վարույթը ժամանակի առումով չձգելու և լրացուցիչ ավելորդ դատական գործերում չնգրկվելու նպատակով:

Անդրադառնալով դիմումատուի նշված «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կառավարչի համար պարտադիր վարքագծի կանոնին,այն է.

- **նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:**

հանձնաժողովի նախագահն հարկ համարեց ներկայացնել,որ ընդհանուր առմամբ կառավարիչը իր գործունեության պետք է իրականացնի հետևյալ սկզբունքներից ելնելով՝

1.Անկախության,
2.Օբեկտիվության,
3.Բարեխղճության,
4.Ողջամտության,
5.Արդյունավետության,նշված սկզբունքների պահպանությունն է բերում կառավաչի գործունեության նկատմամբ վստահության ձևավորմանը:

Վերլուծելով կառավարչի գործողությունները այս սկուզբունքներից ելնելով,կստացի որ կառավարիչը գործել է անկախ,պրագմատիկ ելնելով օբեկտիվ իրավիճակից և բարեխիղճ պահպանելով բողոքի ներկայացման ժամկետները,բայց չի ցուցաբերել ողջամտություն իր գործունեության արդյունավետությունը ապահովելու համար,այսինք ողջամիտ գնահատելով իրավիճակը ակնհայտ էր որ Բանկը պաշպանելով իր իրավունքները պետք է ներկայացներ վերաքննիչ բողոք և իր կողմից բողոք ներկայացնելը այդքան է պարտադիր չէր,որը հետագայում կապահովեր նաև գործի արդյունավետ շարունակությունը:

Վերոնշյալի հիմքով հանձնաժողովի նախագահն առաջարկեց հայտարարել՝«Նյու Վա Թրեյդ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանին նախազգուշացում և հանձնարարել որպեսզի հետագայում իր գործունեության ընթացքում դատարաններ ներկայացվող՝ միջնորդությունները,դիմումները, հայցադիմումները և բողոքները գնահատել ավելի ողջամիտ և գործի արդյունավետությունից ելնելով:

Հանձնաժողովի ներկա անդամները նույնպես համաձայնվելով առաջարկին հարցը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 3
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ 12.07.2021թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված Վաչագան Նուշիկյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Գագիկ Գրիգորյանի 09.07.2021թ-ի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով `«Նյու Վա Թրեյդ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանի գործողությունները /անգործության/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ

կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով ` `«Նյու Վա Թրեյդ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Խաչիկ Նազարյանին հայտարարել նախազգուշացում և հանձնարարել,որ իր գործունեության ընթացքում դատարաններ ներկայացվող՝ միջնորդությունները,դիմումները,հայցադիմումները և բողոքները գնահատվի ավելի ողջամիտ,գործի արդյունավետությունից ելնելով:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան